

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ ԿԱՐԵՆ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ
ՄԱՐԶԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՇՆՈՐՀԱԼԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ,
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ
ԿՈԼԵԿՏԻՎՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԱՐԶԱՅԻՆ
ՑԵՐԵԿՈՒՅԹԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Մեծարգո՛՛ պարոն մարզպետ,

Հարգելի՛՛ հյուրեր,

Միջոցառման հարգարժա՛ն մասնակիցներ.

Ուրախ եմ ողջունելու բոլորիդ գեղարվեստական կրթության և մշակույթի ոլորտներում տարվա ընթացքում ունեցած հաջողություններին և ձեռքբերումներին նվիրված մարզային ցերեկույթ-ամփոփմանը ներկա գտնվելու կապակցությամբ:

Միջոցառումը կազմակերպվել է Կոտայքի մարզպետարանի մշակութային միջոցառումների տարեկան ծրագրի շրջանակներում և միտված է մարզում մշակույթի և արվեստի զարգացմանը:

Հաշվետու ժամանակահատվածում անց են կացվել բազմաթիվ հանրապետական և մարզային նշանակության մրցույթներ և փառատոններ, որոնց լավագույնս են մասնակցել մեր մարզի երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների շնորհալի և տաղանդավոր երեխաները և գեղարվեստական կոլեկտիվները:

Նշեմ դրանցից առավել կարևորները. Միջմարզային մշակութային երկրորդ արվեստների ցուցահանդես և մրցույթ-փառատոն, որի 18 անվանակարգերից 11-ում Կոտայքի մարզի ներկայացուցիչները արժանացել են մրցանակակրի կոչման, <<Երգող Հայաստան>> մանկապատանեկան երգչախմբերի հանրապետական 6-րդ մրցույթ, <<Թատրոն Իքս>> պրոֆեսիոնալ թատրոնների հանրապետական մրցույթ, <<Նոան հատիկ>> մանկապատանեկան թատերախմբերի

ավանդական փառատուն, պարարվեստի բնագավառի <<Արտավազդ>> և Կոտայքի մարզի պարարվեստի մրցույթ-փառատոններ, Գյումրու <<Վերածնունդ>> երաժշտարվեստի միջազգային մրցույթ-փառատուն, Անոն Բաբաջանյանի անվան պատանի դաշնակահարների 8-րդ մրցույթ Փառատուն, <<Երկնքից երեք խնձոր ընկավ>> հեքիաթասացության և բարբառի հանրապետական մրցույթ, Կոտայքի մարզի երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների մրցույթ-փառատուն, <<Կոտայք-2013>> երգարվեստի մրցույթ-փառատուն, <<Հայկական լեռնաշխարհից ծնված ոգին>> հանրապետական նկարչական 4-րդ մրցույթ, Ավետ Գաբրիելյանի և Սարգիս Ասլամազյանի անվան պատանի ջութակահարների և թավջութակահարների հանրապետական 9-րդ մրցույթ և բազում այլ մրցույթ-փառատոններ:

Այսօր մեծարման են հրավիրված այս նշանակալի մշակութային ձեռնարկների շրջանակներում իրենց անմիջական մասնակցությունն ունեցած և բազմաթիվ հաջողություններ գրանցած շնորհալի երեխաները, նրանց այդ բարձունքների հասցրած ուսուցիչները, գեղարվեստական կոլեկտիվների ղեկավարները:

Հիմք ընդունելով այս բացառիկ ու կարևորագույն ցուցանիշները մենք կարող ենք վստահաբար փաստել, որ մարզի մշակութային առօրյայում առկա է բավականաչափ աշխուժություն և մեր հետագա բոլոր նախաձեռնությունները պետք է միտված լինեն այդ աշխուժության կրկնապատկմանն ու բազմապատկմանը:

Բարին ընդ Ձեզ...

04.10.2013թ.